ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ **2023**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Կրթությունն ու ինքնակրթությունը որպես դասավանդման արդյունավետության բաղադրիչ

Կատարող՝ Թագուհի Ներսիսյան

Առարկա՝ դասվար

Ուսումնական հաստատություն՝ Հրազդանի Հ. Պարոնյանի անվան թիվ **12** հիմն. դպրոց

ՀՐԱԶԴԱՆ **2023**

Բովանդակություն

Ներածություն ————————————————————————————————— 3-4 էջ

Գլուխ 1.

1.1 - Ի՞նչ է ինֆնակրթությունը————————————————————— 5 – 8 էջ

1.2 - Ինֆնակրթության գործառույթները ——————————————————— 9 – 14 էջ

Գլուխ 2.

2.1 – Հետազոտական մաս ----------————————— 15 – 18 էջ

Եզրակացություն - ——————————————————————————— 19 -20 էջ

Առաջարկություն - ——————————————————————— 21 – 23 էջ

Գրականության ցանկ - ——————————————————————————24էջ

Ներածություն

Արդիականություն : Կրթությունն անհրաժեշտ է յուրաքանչյուրին: Դուք կսխալվեք, եթե կարծեք, որ այդ գիտելիքները ձեզ ոչինչ չեն տալիս, քանի որ դրանք տալիս են ամենակարեւորը `հիմք եւ ռեսուրսներ, ամբողջ հետագա կյանքի հմտությունների եւ գիտելիքների անկախ ձուլման համար: Ինչպես Ռալֆ Վալդո Էմերսոնն է ասում. «Դպրոցներում եւ համալսարաններում ուսումը կրթություն չէ, այլ միայն կրթություն ստանալու միջոց»:

Ժամանակակից կրթությունն այսօր դիտվում է ոչ թե որպես ձեռք բերված տեղեկատվության հանրագումար, այլ որպես տարբեր խնդրահարույց իրավիճակներում գործելու անձի պատրաստակամություն և կարողություն:

Ուսումնական հաստատություններում մեզ օգնում են հասկանալ՝ ինչ ենք ուզում և ուր ենք գնում: Սակայն բազմակողմանի զարգանալու և մասնագիտության մեջ հմտանալու համար միայն այդքանը բավարար չէ:Ինքնակրթությունը գիտակցված, ինքնուրույն, ճանաչողական գործընթաց է, որի նպատակն է որոշակի ունակությունների, կարողությունների կատարելագործումը:

Մանկավարժական գործունեության յուրահատկությունն այն է, որ սովորողների ուսումնական գործունեության բարձր որակը պայմանավորված է ոչ միայն առարկայական գիտելիքներով, դասավանդման մեթոդներով, այլև հարակից գիտական, հասարակական կյանքի ոլորտների մասին գիտելիքներով, ժամանակակից քաղաքական, տնտեսական կողմնորոշմամբ, մշակութային բարձր մակարդակով:

Ինքնակրթությունը սեփական նախաձեռնությամբ գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու գործընթացն է:

Ինքնակրթությունը թույլ է տալիս զարգանալ և դիմանալ բոլոր մարտահրավերներին:Դուք կարող եք սովորել: Յուրաքանչյուր ոք համառության և մեծ ջանքերի շնորհիվ կարող է սովորել և տիրապետել նոր թեմայի:

Ինքնակրթությունն անվճար է: Հանրային գրադարանները մարդկանց սովորելու մեծ հնարավորություն են տալիս:

Նրանք, ովքեր խուսափում են կրթության համար գումարներ ծախսել, համացանցի և գրքերի միջոցով իրենց սիրելի առարկայի վերաբերյալ կարող են տեղեկատվություն ստանալ:Գաղտնիք չէ, որ ինքնակրթությունը մեծ պատասխանատվություն և կենտրոնացում է պահանջում:

Հետազոտության նպատակն է ՝ ուսումնասիրել և բացահայտել կրթության և ինքնակրթության դերը դասավանդման արդյունավետության գործում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել կրթության և ինքնակրթության վերաբերյալ առկա գրականություն

2. իրականացնել հարցում ուսուցիչների շրջանում՝ բացահայտելու կրթության և ինքնակրթության ազդեցությունը դասավանդման արդյունավետության զարգացման գործում:

Գլուխ 1

1.1 Ի՞նչ է ինքնակրթությունը

Ինքնակրթության անհրաժեշտությունը թելադրված է, մի կողմից, դասավանդման գործունեության յուրահատկությամբ, սոցիալական դերով, մյուս կողմից՝ շարունակական կրթության իրողություններով և

միտումներով, ինչը կապված է մանկավարժական գործունեության անընդհատ փոփոխվող պայմանների, հասարակության կարիքների, գիտության և պրակտիկայի էվոլյուցիայի, մարդու նկատմամբ անընդհատ աճող պահանջների, սոցիալական գործընթացների և իրավիճակների փոփոխություններին արագ և համարժեք արձագանքելու նրա կարողության, իր գործունեությունը վերափոխելու պատրաստակամության, նոր, ավելի բարդ առաջադրանքներ հմտորեն լուծելու կարողության հետ:

Ինքնակրթությունն արտահայտվում է ուսուցչի ճանաչողական ակտիվության բավարարմամբ, շարունակական կրթության միջոցով ինքնահիրացման պահանջմունքով:

Ինքնակրթության էությունը կայանում է մտավոր կարողությունների զարգացման, խնդիրները հաղթահարելու կարողության, ինքնուրույն աշխատանքի, որն ուղղված է ոչ միայն անձնական ինքնակատարելագործման, այլև մասնագիտական կարողության զարգացմանը:

Ինքնակրթության հիմնական սկզբունքներն են՝ շարունակականությունը, նպատակաուղղվածությունը, ամբողջականությունը, ընդհանուր և մասնագիտական ոլորտների միասնությունը, փոխկապակցվածությունն ու հաջորդականությունը, մատչելիությունը, սպասողական բնույթը, մշտական անցումը ամենացածրից ամենաբարձր մակարդակին, փոփոխականությունը և այլն:

Գոյություն ունեն ինքնակրթության տարբեր ձևեր.

- հատուկ կրթական ուսուցում (բարձրագույն կրթություն կամ երկրորդ մասնագիտություն)
- վերապատրաստումներ
- անհատական ինքնակրթական աշխատանք՝ գանգվածային լրատվության, համակարգչային և գրասենյակային սարքավորումների, գրադարանների, թանգարանների, ցուցահանդեսների, թատրոնների, ակումբների, էքսկուրսիաների, գիտական, տեխնիկական, գեղարվեստական, սպորտային ընկերությունների, հետազոտությունների, փորձերի, ստեղծագործական գործունեության և առաջադրանքների միջոցով, գիտնականների, հետաքրքիր մարդկանց հետ հաղորդակցության, լավագույն փորձի ընկալման և սեփական պրակտիկ գործունեության ընդհանրացման միջոցով, և այլն:

Ինքնակրթության նպատակները.

1. Ինքնանպատակ ինքնակրթությունը գործունեության որոշակի տեսակ է, որը մարդու մոտ առաջացնում է կայուն հետաքրքրություն և գիտելիքների տիրապետման դրդապատճառներ:
2. Համակցված ինքնակրթություն. զբաղվելով նպատակաուղղված գործունեությամբ՝ մարդը նոր բան է սովորում՝ հետագայում օգտագործով այդ գիտելիքներն ու հմտությունները:
3. Նպատակային ինքնակրթություն. պայմանավորված է նրանով, որ մարդն ինքն է իր առջև նպատակ դնում որոշակի ոլորտում: Այդ նպատակը որոշում է հետագա քայլերը, նպատակին հասնելու

միջոցների որոնումը, ինքնուրույնությունը՝ նպատակներ դնելու, դրանց լուծման և արդյունքների վերլուծության ժամանակ:[3]

Առանձնացնում են ինքնակրթության երեք փուլ.

- Իրավիճակային ինքնակրթություն. ուսուցչի ջանքերը ի հայտ են գալիս իրավիճակային ներազդեցությամբ՝ որպես պատասխան ռեակցիա անուղղակի արտաքին պահանջներին և փախազդեցությանը:
- Իրավիճակային – նախածեռնողական. այստեղ նախածեռնությունը մանկավարժինն է, սակայն բացակայում է համակարգվածությունը (կարդալ գրքեր, նայել տեսանյութեր):
- Նախածեռնողական ինքնակրթություն. Այս դեպքում մանկավարժը ուշադրությունն ուղղում է իրեն հետաքրքրող նյութին, իր առջև ունի խնդիրներ, որոշումներ է ընդունում գործունեության ուղիների ընտրության հարցում, ստեղծում է անհրաժեշտ պայմաններ՝ նպատակին հասնելու համար: [4]

Դպրոցում ուսումնական գործընթացի որակական կատարելագործումը, սովորողների կրթության արդյունավետությունը ուղղակիորեն կախված է մանկավարժի պատրաստվածության մակարդակից:
Ինքնակրթությունը գիտակցված, ինքնուրույն, ճանաչողական գործընթաց է, որի նպատակն է որոշակի ունակությունների, կարողությունների կատարելագործումը:
Մանկավարժական գործունեության յուրահատկությունն այն է, որ սովորողների ուսումնական գործունեության բարձր որակը պայմանավորված է ոչ միայն առարկայական գիտելիքներով, դասավանդման մեթոդներով, այլև հարակից գիտական, հասարակական կյանքի ոլորտների մասին գիտելիքներով, ժամանակակից բաղաքական, տնտեսական կողմնորոշմամբ, մշակութային բարձր մակարդակով:

Այս կոնտեքստում ինքնակրթությունը կարող է լինել.

- Մասնագիտական (պրոֆեսիոնալ) (դասավանդման առարկա)
- Հոգեբանական–մանկավարժական (սովորողներ, ծնողներ)
- Հոգեբանական (ոճ, շփում, ներազդման միջոցներ, ղեկավարման հմտություններ, հուզական այրման կանխարգելում)
- Մեթոդական (մանկավարժական տեխնոլոգիաներ, ձևեր, ուսուցման մեթոդներ և հնարներ)
- Ինֆորմացիոն–կոմունիկատիվ տեխնոլոգիաների յուրացում
- Իրավական
- Էսթետիկ
- Առողջապահական տեխնոլոգիաների յուրացում

- Պատմական, և այլն:

Եթե մանկավարժական գործունեությունը ինքնակրթության տեսանկյունից ներկայացնենք բայաշարքով, այն կունենա հետևյալ տեսքը. կարդալ, ուսումնասիրել, փորձարկել, վերլուծել, դիտարկել, գրել:

Ի՞նչն է մղում մեզ ինքնակրթությամբ զբաղվել.

- մասնագիտական պահանջները,
- դասերին, ծնողական ժողովներին, դասղեկական ժամերին, ընդհանուր դասարանական միջոցառումներին, օլիմպիադաներին և այլ գործընթացներին պատրաստ լինելը,
- նոր տեղեկատվություն փնտրելու և վերլուծելու անհրաժեշտությունը,
- անձնային պահանջմունքները:

Ինքնակրթությունը առաջ շարժվելու հնարավորություն է ընձեռում, բարձրացնում է կրթության որակը, սեփական մասնագիտական կոմպետենտությունը, ստեղծագործելու ցանկությունը:[5]

1.2 Ինքնակրթության գործառույթները

Ժամանակակից կրթությունն այսօր դիտվում է ոչ թե որպես ձեռք բերված տեղեկատվության հանրագումար, այլ որպես տարբեր խնդրահարույց իրավիճակներում գործելու անձի պատրաստակամություն և կարողություն:

Այսպիսով, Տ. Ա. Ստեֆանովսկայան (2008), հիմնական պահանջներից, որոնք ներկայացվում են մանկավարժին (դասղեկին)՝ որպես պրոֆեսիոնալի, առանձնացնում է հետազոտական կոմպետենտությունը, կոադապտիվ վարպետությունը, մեդիագրագիտությունը: Դա նշանակում է, որ ժամանակակից ուսուցիչը պետք է ունենա գիտելիքներ և փորձ մանկավարժական հետազոտությունների ոլորտում, ինքնուրույն կատարի գիտական հետազոտություն, ուսումնասիրի մանկավարժական երևույթներն ու փաստերը՝ ուսուցման և դաստիարակության օրինաչափությունների, կառուցվածքի, բովանդակության, տեխնոլոգիաների մասին նոր գիտելիքներ մշակելու նպատակով: Սա մանկավարժական հետազոտության նպատակային, համակարգված, օբյեկտիվ (անաչառ), վերարտադրելի հմտությունների յուրացումն է նոր պայմաններում: Բացի այդ, ուսուցչի համար կարևոր է ունենալ հարմարվողականության հմտությունների բարձր մակարդակ ՝ հիմնված կոադապտացիոն գիտելիքների վրա:

Կոադապտացիա–հարաբերական հարմարվողականությունը տարբեր հասկացությունների, դատողությունների, տեսությունների, գաղափարների փոխկապակցումն է, գոյություն ունեցող համակարգերի, տեխնոլոգիաների փոխհարաբերությունների և փոխկապակցվածության նույնականացումը, ինչպես նաև հավասարեցում, հարմարեցումն է գոյություն ունեցողներին, որոնք գործում են որոշակի տեսության մեջ և իրականացվում են գործնականում: Բազմաթիվ տեսություններ, գաղափարներ, տեսակետներ ուսուցչին հնարավորություն են տալիս ընտրելու և փաստարկելու իր տեսակետը: Ուսուցիչը պետք է կարողանա բազմաթիվ տեսություններից, գաղափարներից, տեսակետներից ընտրել և որակապես հարմարեցնել ընտրվածը դպրոցի և դասարանի հատուկ պայմաններին:

Ուսուցչի մեդիագրագիտությունը բաղկացած է համակարգված մեդիա – ուսումնասիրություններից, հմտություններից և իրենց կողմից սահմանված վարպետության մակարդակի տիրապետումից՝ մանկավարժական գործընթացում դպրոցականների մեդիագրագիտությունը իրականացնելու համար: Վերոնշյալ նկարագրություններն իրականացնելիս ամենակարևոր հմտությունը, որը պետք է ունենա յուրաքանչյուր բարձր որակավորում ունեցող ուսուցիչ՝ ինքնակրթությունն է:

Գ. Մ. Կոջասպիրովան ինքնակրթությունը բնութագրում է որպես հատուկ կազմակերպված, սիրողական, համակարգված ճանաչողական գործունեություն, որն ուղղված է որոշակի անհատական և (կամ) հասարակական նշանակալի կրթական նպատակների իրականացմանը, ճանաչողական հետաքրքրությունների բավարարմանը, ընդհանուր մշակութային և մասնագիտական պահանջներին և մասնագիտական որակավորման բարձրացմանը:

Ինքնակրթությունը որպես մասնագետի մասնագիտական և անձնային կարողությունների զարգացման կարևորագույն միջոց համարելը հիմնավորված է դրա գործառույթներով: Ինքնակրթության հիմնական գործառույթներն են.

- ընդարձակող – կուտակող՝ նոր գիտելիքների ձեռքբերում,
- ինդիկատիվ՝ մշակույթում և հասարակության մեջ իր տեղի սահմանում,
- փոխհատուցող՝ դասարանային և դպրոցական թերությունների հաղթահարում,
- ինքնազարգացնող՝ աշխարհի սուբյեկտիվ պատկերի, սեփական գիտակցության, հիշողության, մտածողության, ստեղծագործական որակների բարելավում,
- մեթոդաբանական՝ մասնագիտական սահմանափակության հաղթահարում,
- հաղորդակցական՝ գիտական ոլորտների և մասնագիտությունների միջև կապի հաստատում,
- համագործակցող – ուղեկցող՝ ստեղծագործական աշխատանքի խթանում, շարունակական փոխլրացում,
- ինքնավերականգնող՝ սեփական մտածողության իներցիայի հաղթահարում,
- հոգեթերապևտիկ՝ գոյության ամբողջականության պահպանում, համամարդկային պատկանելիության զգացում:

Եկեք ուշադրություն դարձնենք ինքնակրթության գործընթացին ՝ որպես անհատի կրթության աղբյուր: Ի սկզբանե ինքնակրթության մոտիվացիան առաջանում է ի պատասխան գիտելիքի անհրաժեշտության : Այնուամենայնիվ, գիտելիքների ո՞ր տեսակներն ու ձևերն են պայմանավորում և որոշում այն գործընթացը, որով մարդը դառնում է կրթված էակ: Հաղորդակցական տեսանկյունից կրթությունն ունի ռեպրոդուկտիվ բնույթ:

Է. Ա. Կլիմովը նշում է, որ ժամանակակից պայմաններում կրթական գործընթացի ճգնաժամը լայն իմաստով պայմանավորված է այն հանգամանքով, որ կրթության զարգացումը զիջում է մշակույթի զարգացմանը: Բացի այդ, Յու. Վ. Սենկոն, Մ. Ն. Ֆրոլովսկայան նշում են, որ անհնար է մշակույթին համարժեք դառնալ միայն գիտելիքների ավելացման և կուտակման միջոցով: Ինքնակրթության գործընթացում կարևոր դեր է ունի մասնակցությունը մշակութային գործընթացին: Դառնալ մշակութային գործընթացի մասնակից, երկխոսություն վարել դրա հետ, այսինքն՝ լինել ոչ միայն մշակույթի սպառող, այլև դրա կրող, ստեղծող,

հնարավոր է առաջին հերթին գիտելիքները արժեքային համակարգ ներառելու ամենախոր գործընթացն ապրելու միջոցով: Այս դիրքորոշումը ծառայել է որպես նախնական նախադրյալ ուսուցչի անձի վրա ներազդելու ամենաարդյունավետ եղանակների որոնման համար՝ հումանիստական ուղղվածության նպատակով: Ժամանակակից կրթական պայմաններում հումանիստական մոտեցումը կրթության ուժեղ կողմերից է, որը կարելի է ընդունել որպես մեկնարկային սկիզբ՝ ինքնակրթության միջոցով ուսուցչի մասնագիտական մտածողության զարգացման պայմանները կազմակերպելիս: Այս կոնտեքստում կրթության էությունը հիմնված է գիտելիքի՝ որպես անձնային արժեքի վրա, որը թույլ է տալիս կերտել սեփական կերպարը՝ հիմնվելով սովորողի համար դրա անձնային նշանակության վրա և որպես արժեքային ուղեցույց նրա կյանքում և մասնագիտության մեջ: Այնուամենայնիվ, հումանիստական կրթության պակասը լրացնելը միայն հումանիտար ցիկլի գիտելիքների աճով բավարար չէ: Շատ ավելի մեծ չափով մասնագիտական ինքնակրթությունը պետք է ուղղված լինի մանկավարժական մտածողության ձևավորմանը, ուսուցչի մեթոդական մշակույթին, այնպիսի հարցերի լուծմանը, ինչպիսիք են. ի՞նչ ուսումնասիրել, ինչպե՞ս դա անել:

Է. Ա. Կլիմովը դիտարկում է կրթության սկզբունքորեն նոր խնդիր : Սա ոչ թե պատրաստի նյութի հարմարեցումն է սովորողի հնարավորություններին, այլ սովորողի գործունեության ձևավորումը՝ օբյեկտի ուսումնասիրության համար (ըստ որոշակի ծրագրի ՝ ճանաչողության հարցերին համակարգված մոտեցման տրամաբանությանը համապատասխան): Հայտնի է, որ բնական պայմաններում մարդիկ անտեղյակությունից դեպի գիտելիք են շարժվում հետևյալ կերպ. դրանք չեն ամփոփում առանձին վերցված տպավորությունները, այլ, ընդհակառակը, անցնում են որոշակի օբյեկտի ամբողջական (նույնիսկ սկզբում անորոշ) պատկերացումից դեպի դրա տարրերի վերլուծություն: Ըստ երևույթին, նպատակահարմար է նաև, որ ինքնուսը նախ պատկերացում կազմի ուսումնասիրվող օբյեկտի կառուցվածքի ընդհանուր ձևի մասին: Եվ միայն այն գիտակցելուց հետո անցնի օբյեկտի վերլուծական դիտարկմանը: Շատ կարևոր է, որ ոչ թե ուսուցիչը պարտադրի, այլ սովորողը ինքնուրույն գիտակցի և յուրացնի ճանաչողության այս գործընթացը:

Լ. Մ. Միտինայի կողից մշակվել է ուսուցչի վարքագծի փոփոխման մոդելը (2004թ.), որն ուղղված է գիտակցված ինքնակրթությանը, սեփական փորձի գիտակցման և վերախմաստավորման միջոցով: Այս մոդելը սկզբունքորեն տարբերվում է ժամանակակից գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերման միջոցով ուսուցիչների վերապատրաստման գործընթացի վերաբերյալ ավանդական պատկերացումներից: Այն ներառում է ուսուցչի վարքագծի փոփոխության չորս փուլ՝ նախապատրաստում, իրագեկում, վերագնահատում, գործողություն: Իրազեկման փուլում ներառված են հիմնականում ճանաչողական գործընթացները՝ արտացոլում, դադար, ընդմիջում, ցանկացած անմիջական, մեխանիկական ընթացիկ գործընթացի կամ վիճակի սահմաններից դուրս գալը, կանխակալ վերաբերմունքից ազատվելը (ըստ՝ Ս. Լ. Ռուբինշտեյնի): Արդյունքում, ուսուցիչը սկսում է գիտակցել սեփական անցանկալի վարքի

ազդեցությունն իր միջավայրի վրա (աշակերտներ, ընտանիք, ընկերներ) և վերագնահատել իր անձը: Ակնհայտ է, որ ինքնակրթության անհրաժեշտությունն առաջանում է այն ժամանակ, երբ մարդու մոտ ձևավորվում է սեփական գործողությունները վերլուծելու, հասարակական նշանակության նպատակներ, հարցեր և խնդիրներ դնելու կարողություն, որը բնորոշվում է համակարգային նոր գիտելիքներ փնտրելով, ինքնուրույն բացահայտելով կամ ձեռք բերելով: Իրազեկումը նշանակում է, որ իրականացվել է որոշակի ներդրում, որն ուղղված է ոչ միայն նոր գիտելիքների ձեռքբերմանն, այլև բուն գործունեության ձևավորմանը: Այս ներդրման էական օղակը մեթոդաբանական գիտելիքն է, քանի որ ուսուցիչն, այդպիսով, սկսում է իմանալ, թե ինչպես շարժվել անտեղյակությունից դեպի գիտելիք:

Համակարգային վերլուծության մեթոդի ընդհանուր սխեման մենք գտնում ենք Ցու. Ա. Սամոնենկոյի (2001) աշխատանքում: Ընդհանուր առմամբ, այն իրենից ներկայացնում է.

- դիտարկվող առարկայի որոշակի առանձնացում, դրա մասին գիտելիքների ձեռքբերման սկզբնական փուլում,
- համակարգի որակական ինքնատիպության որոշում,
- համակարգի գործառույթների, օբյեկտի նշանակության որոշում,
- համակարգի կառուցվածքի ընտրություն՝ իր տարրերի առանձնացմամբ, որոնք ունեն «հորիզոնական» և «ուղղահայաց» բնույթ,
- համակարգը բնութագրող բազմաթիվ կապերից առավել կարևորների առանձնացում, առանց որոնց այն չի կարող առաջանալ և զարգանալ,
- տվյալ օբյեկտի և արտաքին միջավայրի փոխհարաբերությունների պարզաբանում,
- արտաքին և ներքին համակարգային կապերի տարբերակում,
- համակարգի կայունության սահմանների որոշում,
- առաջընթացի նկարագրություն:

Օբյեկտները համակարգված ուսումնասիրելիս դրանք ավելի լայն և բազմաշերտ են երևում, և առաջանում է անտեղյակությունից դեպի գիտելիք հետագա ինքնուրույն շարժվելու հեռանկարը: Ն. Ա. Մորևան գիտելիքի նկատմամբ նման շարժման ինքնուրույնությունը կապում է մտածելու, իրավիճակները վերլուծելու, որոշումներ կայացնելու և սեփական նախաձեռնությամբ գործելու ունակությունների հետ՝ անկախ պարտադրված հայացքներից: Սակայն, ինքնուրույնությունը դրական երանգավորում կունենա միայն այն դեպքում, եթե անձը, մասնավորապես ուսուցիչը, ունենա կոմպետենտության բարձր մակարդակ: Ուսումնական հաստատությունում ուսուցչի ինքնակրթությունը բազմակողմանի և բազմաբնույթ է: Բ. Իժանովը (2010թ.), ուսուցիչների ինքնակրթության համակարգում որպես հիմնական ուղղություններ առանձնացնում է.

- նոր նորմատիվային փաստաթղթերի հետ ծանոթացում, որոնք առնչվում են կրթությանն ու դաստիարակությանը,
- գիտական – մեթոդական գրականության ուսումնասիրում,
- ծանոթացում՝ մանկավարժության, հոգեբանության, անատոմիայի, ֆիզիոլոգիայի ոլորտներում առկա նորագույն նվաճումների հետ:
- նոր ծրագրերի և մանկավարժական տեխնոլոգիաների հետ ծանոթացում:
- ծանոթացում՝ կրթական հաստատությունների նորարարական պրակտիկաներին,
- ընդհանուր մշակութային մակարդակի բարձրացում:

Այնուամենայնիվ, չնայած մասնագիտացված գրականության մեջ նշված այս կամ այն նկարագրություններին, հետագա ուսումնասիրության նպատակներին, ժամանակակից ուսուցիչը պետք է սովորի ինքնուրույն գիտակցել, տարբերակել անհայտը, և ոչ միայն սպասել որոնման ուղղությանը, հաջորդ ճանաչողական նպատակին: Առարկայական նյութերի, մեթոդների կիրառման վերաբերյալ ուսուցչի գիտելիքները հիմք են հանդիսանում նոր, անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանը: Ոչ պակաս կարևոր է նաև, որ ինքնակրթությունը լինի արդյունավետ, և, կարևորը, հետաքրքիր ու գրավիչ հենց ուսուցչի համար:
Այսպիսով, ուսուցչի ինքնակրթության ավանդական մոտեցումները, որոնք հիմնականում հիմնված են տեղեկատվական տրամաբանության վրա, հնացել են, իսկ նոր մոտեցումները ինքնակրթության նոր հնարավորություններ են ընձեռում:[6]

Հետազոտական մաս

Դասավանդման ընթացքում կրթության և ինքնակրթության արդյունավետությունը բացահայտելու նպատակով հանրակրթական դպրոցների 22 ուսուցչի շրջանում անցկացրել ենք հարցախույզ:Հարցաթերթիկը կազմված էր 7 հարցից, որոնցից 5-ը ունեին պատասխան տարբերակներ, իսկ 2-ն ակնկալում էր ազատ շարադրանք:

Հարցաթերթիկի առաջին հարցով , թե ինչ կրթություն ունեն ուսուցիչները, պարզվեց, որ հարցվողներից բոլորն էլ ունեն բարձրագույն կրթություն:



Հարցաթերթիկի երկրորդ հարցով փորձել ենք պարզել, թե ուսուցիչները արդյոք զբաղվում են ինքնակրթությամբ:Հարցվողներից 19-ը հարցին տվել է <<այո>> պատասխանը, 2-ը՝ <<երբեմն>>, իսկ 1-ը՝ <<հաճախ>>:Ուսուցիչների տված պատասխանները բավական ոգևորիչ էին, քանի որ նրանց մեծամասնությունը զբաղվում է ինքնակրթությամբ:



Հարցաթերթիկի երրորդ հարցով փորձել ենք պարզել, թե ինքնակրթության ինչ տարբերակ են նախընտրում ուսուցիչները:Ուսուցիչները հնարավորություն ունեին ընտրելու պատասխան տարբերակներից մի քանիսը:Հարցվողներց 16-ը նշել են <<համացանց>> պատասխան - տարբերակը, 16-ը մասնակցում են վերապատրաստումների, 15-ը ինքնակրթությամբ զբաղվում են գիրք կարդալու միջոցով, միայն 5-ն է

հեռուստատեսությամբ հարստացնում իր գիտելիքները, իսկ հարցվողներից մեկը ընտրել է <<Բոլոր ձևերը զուգակցելով>> տարբերակը:

Հարցաթերթիկի չորրորդ հարցը պահանջում էր պատասխանի <<ազատ շարադրանք>> տեսակը:Այս հարցի միջոցով փորձել ենք պարզել, թե արդյոք ուսուցիչները կարևորում են ինքնակրթությունը:Պետք է մեկնաբանեն իրենց տված պատասխանները:Ուսուցիչների տված պատասխաններից պարզ է դառնում, որ բոլորն էլ կարևորում են ինքնակրթությունը, քանի որ նրանք ցանկանում են քայլել ժամանակին համընթաց: Անընդհատ փոփոխվող այս աշխարհում պետք է քայլել ժամանակին համահունչ: Մանավանդ, եթե գործ ունենք սերունդների հետ: Նրանց կարծիքով ինքնակրթությունը նաև նպաստում է ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:

Հարցաթերթիկի հաջորդ հարցին ՝ թե կրթությունն ու ինքնակրթությունը արդյոք բարձրացնում են դասավանդման արդյունավետությունը, հարցվողներից 21-ը պատասխաններից ընտրել է <<այո>> տարբերակը, միայն 1 հոգի ընտրել է << մասամբ>> պատասխան-տարբերակը:



Նախավերջին հարցով փորձել ենք պարզել, թե դասավանդման ընթացքում արդյոք նրանց օգնում են ուսումնառության ողջ ընթացքում ձեռք բերած մասնագիտական գիտելիքները:

Հարցվողներից 17-ը պատասխան տարբերակներից ընտրել է <<այո>> տարբերակը, 4-ը <<մասամբ>>, 1-ը <<հանախ>>:



Վերջին հարցը պահանջում էր պատասխանի <<ազատ շարադրանք>> տարբերակը:Ուսուցիչները պետք է իրենց կյանքից բերեն օրինակներ, որ ինքնակրթության արդյունքում ստացած գիտելիքները նպաստել են դասավանդման արդյունավետության բարձրացմանը:Ուսուցիչները հարցին տվել են շատ հետաքրքիր պատասխաններ:Ներկայացնեմ դրանցից մի քանիսը.

Հայտնի մարդկանց մասին դասերում, լեռնագնացության մասին դասում, քարանձավագիտության մասին դասում:

Երեխաներին շատ է հետաքրքրում տվյալ ստեղծագործության հեղինակի անձնական կյանքից տեղեկություններ լսել , ես ինքնակրթության արդյունքում կարողանում եմ բավարարել երեխաներին:

Նախագծային աշխատանք իրականացնելու համար ինձ կօգնի Իթվինինգ հարթակում ժամանակին աշխատելը:

Մասնակցել եմ ներառական կրթության հետ կապված վերապատրաստման,որն էլ ինձ օգնել է էլ ավելի հեշտ աշխատել տարբեր խնդիրներ ունեցող երեխաների հետ:

Նոր մեթոդների կիրառում...

Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը մեծ է մեր կյանքում: Ուստի պետք է անընդհատ ավելացնենք մեր գիտելիքները հատկապես ինքնակրթության միջոցով:

Ինքնակրթության արդյունքում ստեղծեցի մի հոդված՝,,Համեղ մաթեմատիկա,, ,որը միտված էր ապացուցել,որ մաթեմատիկան բոլորովին էլ չոր գիտություն չէ, նրա մեջ կա և՛ծիծաղ,և՛ համ, և՛ լիրիկա, ու ստացվեց դրանով ոգևորել աշակերտներիս:

Իմ առաջին մասնագիտությունը ֆրանսերենն է, անգլերենի ուսուցիչ դարձել եմ համալսարանի տված միջին գիտելիքների և բացառապես ինքնակրթությանս շնորհիվ: Կրկնուսույց եմ, կամավորին ապահովել եմ 80% արդյունք:

Դժվարանում եմ հիշել

Որքան շատ է ուսուցիչն իր աշխատանքի ընթացքում կիրառում տեղեկություններ,մեթոդներ ե տեխնոլոգիաներ,զբաղվում ինքնակրթությամբ, այնքան արդյունավետ է նրա աշխատանքը:

Օրինակ, կենդանիների վերաբերյալ համացանցից բազմաթիվ հետաքրքիր տեղեկություններ ենք գտել նրանց վարքագծի, բազմացման, սերնդի պահպանման և ապրելավայրերի վերաբերյալ: Դրանք դիտելով և ներկայացնելով դասերը դարձել են ավելի հետաքրքիր և մատչելի ընկալման համար:

Արդյունքների վերլուծությունից պարզ է դառնում, որ ուսուցիչների մեծամասնությունը զբաղվում է ինքնակրթությամբ:Նրանք փորձում են բայլել ժամանակին համահունչ:Այսօրվա սերնդի հետաքրքրությունները բավարարելու համար պետք է շարունակ զբաղվել ինքնազարգացմամբ և ինքնակրթությամբ:Սա լավագույն միջոցն է ուսումնառության որակը բարձրացնելու համար:

Եզրակացություն

Այսօրվա աշխարհում ամեն ինչ փոխվում է հսկայական արագությամբ: Ով , եթե ոչ ուսուցիչը, պետք է ձգտի դառնալ նույն աշխարհի մի մասը: Մանկավարժական գործունեությունը չափազանց բարդ է: Ուսումնական եւ կրթական աշխատանքի իրականությունն այնպիսին է, որ ուսուցիչը ցանկանում է հաճախակի եւ հիմնարար փոփոխություններ կատարել իր սեփական գործունեության կազմակերպման գործընթացում եւ աշխատանքային պայմաններում: Սոցիալական պահանջների փոփոխություն, գիտությունների, տեխնիկայի եւ ուսուցման գործիքների զարգացման բարձր տեմպերը ավելի ու ավելի բարդ առաջադրանքներ են դնում ժամանակակից ուսուցչի համար եւ մարտահրավեր նետում նրա ստեղծագործական մտածողությանը, անակնկալներին արձագանքելու ունակությանը: Այնուամենայնիվ, հետաքրքրասիրությունը եւ ցանկությունը իմանալու ամեն ինչ իրենց դրդում է շարունակական ինքնազարգացման:

Ուսուցչի ինքնակրթության պլանը պարտադիր չէ, որ սահմանի թղթի վրա, բայց, այնուամենայնիվ, անհրաժեշտ է խստորեն հետևի իր պլանին:

Ինքնավստահությունը մանկավարժական գործունեության անբաժանելի մասն է, քանի որ ուսուցիչը ոչ միայն գիտելիքների փոխադրող է, այլեւ անձնական օրինակ:

Սեփական կրթության (ինքնակրթության) համար պատասխանատվություն կրելը և գիտելիքներ ձեռք բերելու գործընթացը հիանալի գաղափար է:

Տեխնոլոգիաների փոփոխության արդյունքում աշխատանքն ավելի ու ավելի է փոփոխվում:Որոշ տեխնոլոգիաների փոխարինում են նորերը, որոնք կարող են նույնիսկ ինքնուրույն կառավարվել: Այսպիսով՝ աշխատատեղերի քանակը նվազում է, և աշխատանք են ունենում միայն նրանք, ովքեր մասնագիտական որակավորում ունեն:

Մասնագիտությանը լիարժեք տիրապետելու և հմտություններ ձեռք բերելու համար միայն բարձրագույն կրթությունը բավարար չէ:

Ինքնակրթությունը միշտ կարևոր է եղել, բայց այժմյան հասարակության մեջ ինքնակրթության դերը ոչ թե կարևոր, այլ վճռական է:

Եթե դուք չեք կարողանում ինքնակրթությունն օգտագործել որպես աշխատանք գտնելու միջոց, ապա փորձեք ինքնակրթության միջոցով նոր աշխատանք ստեղծել:

Այսպիսով՝ ինքնակրթությունը կարևոր է, քանի որ օգնում է նոր հնարավորություններ բացահայտել:

Այդ հնարավորությունները տեսնելու և դրանցից օգտվելու համար պետք է շարունակել ինքնակրթվել:

Առաջարկություն

Ուսումնասիրելով ուսուցիչների պատասխանները և ինքնակրթության միջոցներն ու ձևերը՝ ցանկանում եմ ներկայացնել մի քանի առաջարկություն, որը նույնպես կնպաստի ուսումնառության արդյունավետության բարձրացմանը և կօգնի ուղղորդված և պլանավորված ինքնակրթության իրականացմանը:

1.Ինքնակրթությամբ զբաղվելուց առաջ անհարժեշտ է պարզել, թե ինչ մակարդակում է գտնվում ձեր զարգացումը:Ստորև ներկայացնում ենք համառոտ թեստ, որի նպատակն է ուսուցչի ինքնակրթության ունակության բացահայտումը:Պատասխանել հետևյալ հարցերին՝յուրաքանչյուր հարցի դիմաց նշելով համապատասխան միավորը(5- եթե տվյալ պնդումը ամբողջությամբ համապատասխանում է

իրականությանը, 4- մեծամասամբ է համապատասխանում իրականությանը, 3- և՛ այո, և՛ ոչ, 2 – մեծամասամբ չի համապատասխանում, 1- չի համ ապատասխանում):

1. Ես ձգտում եմ ուսումնասիրել ինքս ինձ:

2.Որքան էլ շատ զբաղված եմ լինում, միևնույն է ժամանակ եմ հատկացնում ինքնազարգացման համար:

3.Առաջ եկող դժվարությունները խթանում են իմ ակտիվությունը:

4.Ես հետադարձ կապ եմ փնտրում, քանի որ դա օգնում է իմանալ և գնահատել ինքս ինձ:

5. Ես անդրադարձ եմ կատարում իմ գործունեությանը՝ դրան հատկացնելով հատուկ ժամանակ:

6.Ես վերլուծում եմ իմ հույզերը և փորձը:

7. Ես շատ եմ կարդում:

8.Ես ազատ երկխոսում եմ ինձ հետաքրքրող հարցերի շուրջ:

9. Ես հավատում եմ իմ հնարավորություններին:

10. Ես ձգտում եմ լինել ավելի բաց շրջապատի համար:

11. Ես գիտակցում եմ շրջապատող մարդկանց ազդեցությունն ինձ վրա:

12.Ես զբաղվում եմ իմ մասնագիտական գործունեությամբ և ունեմ դրական արդյունք:

13.Նորը սովորելը ինձ հաճույք է պատճառում:

14. Աճող պատասխանատվությունը ինձ չի վախեցնում:

15. Ես դրական եմ վերաբերում աշխատանքային առաջընթացին:

Հաշվենք ընդհանուր բալերը.

15-35 միավոր – Զարգացումը կանգ է առել

36-54 միավոր - Ինքնակրթությունը համակարգված չէ, զարգացման կողմնորոշումը խիսկ կախված է պայմաններից:

55-75 – Ակտիվ զարգացում [3]

2. Կազմել ինքնազարգացման ծրագիր մեկ տարվա կտրվածքով և հստակ պլանավորել յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարվելիք աշխատանքը:Ստորև ներկայացնեմ օրինակը.

Ժամանակ	Նպատակ	Ընթացք	Կատարած աշխատանք	Արդյունք

3. Ստեղծել ինքնակրթության և ինքնազարգացման օրագիր, որտեղ կարող ենք նշել պլանավորած գրականության ցանկ, որը դեռ պետք է ընթերցեք:Անհրաժեշտ է նախ պլանավորել ժամանակահատվածը, թե որ գիրքը որքան ժամանակում պետք է ընթերցել:Ընթերցելուց հետո կազմել ընթերցածի ամփոփ նկարագրություն:Կատարել վերլուծություն, ապա՝ եզրահանգում:Գնահատել ստացած գիտելիքների արդյունավետությունը՝ կիրառելով պրակտիկայում:

4. Հետևել համացանցի պաշտոնական կրթական կայքերին, որոնք հաճախակի կազմակերպում են վերապատրաստումներ:Օրինակ՝ eTwinning հարթակին ես ծանոթացել եմ համացանցից, և ինքնուրույն ուսումնասիրելու արդյունքում մասնակցել եմ նախագծի, որի արդյունքում նախագիծը արժանացել է եվրոպական հավաստագրի:Հարթակի նախագծերը կօգնեն այսօրվա կրթական համակարգի պահանջներից մեկի իրականացմանը՝ ստեղծել նախագծեր և ինչու ոչ՝ նաև ստանալ համապատասխան վարձատրություն:

Գրականության ցանկ

1.https://tltaudit.ru/hy/cardiovascular-disease/chto-takoe-samoobrazovanie-celi-i-vidy-samoobrazovaniya/

2. https://m.mamul.am/am/post/81561

3. Алдакаева Н.Г., Яковлева Л.Ю. Тетрадь по самообразованию с заметками на полях / Н.Г., Алдакаева, Л.Ю.Яковлева – Салехард. ИМЦ, 2009 . – 32 с.

https://ds22-prs.edu.yar.ru/starshiy_vospitatel/vospitatelyam/tema_po_samoobrazovaniyu_algoritmi.pdf

4. http://ptk-zht.minsk.edu.by/main.aspx?guid=52961

5.http://eduhmansy.ru/storage/app/uploads/public/5f4/64d/513/5f464d5132f39292662209.pdf

САМООБРАЗОВАНИЕ УЧИТЕЛЯ, КАК УСЛОВИЕ ПОВЫШЕНИЯ КАЧЕСТВА ОБРАЗОВАНИЯ ОБУЧАЮЩИХСЯ Котельникова Галина Новомировна, Директор, кандидат педагогических наук, доцент Муниципальное казенное учреждение дополнительного образования «Центр развития образования»

6. file:///C:/Users/Meruzh/Downloads/problema-samoobrazovaniya-pedagoga.pdf

ПРОБЛЕМА САМООБРАЗОВАНИЯ ПЕДАГОГА Л. М. Беткер